LՈՌՈՒ ՄԱՐՁԻ ՇԱԴԿԱԲԵՐ ԴՄՄԱՅԵՔ

Յամայնքի 2018 թվականի

ևազմել L` hամայնρի դեկավար Յովիկ Յովհաննիսյան<u>ր</u>

Չասsաsվել է `համայնքիավագանու 2018 թ-ի փեsրվարի 7-ի թիվ 3-կ որոշմամբ

ōԱՂԿԱԲԵՐ 2018p.

բովանդակություն

ა ნიენე გენე გენე გენე გენე გენე გენე გენე
1. ՅԱՄԱՅԻՆ ԵՐԸ4
2. ԴԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾԻԱԳՐԵՐԻ ՑԱՐԻՐ Ա ՏԻԱՄԱԻԱՐԱՆԱՐ ՎԳՐԵՐԻ (ԵՍՏ
በLበዮՏሁԵՐԻ)9
3. ՅԱՄԱՅԵՔԱՅԻԵ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱԵ 2018Թ. ՇՐԱԳԻՐԸ17
4. ՅԱՄԱՅԵՔԻ ՏԱՊ-Ի ՖԻԵԱԵՍԱՎՈՐՄԱԵ ՊԼԱԵՐ19
5. ՅԱՄԱՅԵՔԻ ՏԱՊ-Ի ՄՈԵԻՏՈՐԻԵԳԻ և ԳԵԱՅԱՏՄԱԵ ՊԼԱԵԸ21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծաղկաբեր համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված հնգամյա ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը։

ՏԱՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են` համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (աղյուսակ 1), ոլորտային նպատակները (աղյուսակ 2)։ ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (աղյուսակ 3) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը` ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների(աղյուսակ 4)։

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (աղյուսակ 5)։

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտի (աղյուսակ 6)։

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (աղյուսակ 7) ներկայացված է տեղեկատվություն ՏԱՊ-ում ներկայացված յուրաքանչյուր սպորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ։

1. Համայնքի տեսլականը եվ որտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 34-Ն որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի համայնքի տեսլականն է Ծաղկաբեր համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկարգ, կրթական և մշակութային բավական առաջընթաց ունեցող համայնք։ Մտորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները, բերված են ելակետային և թիրախային արժեքներ։ Ցուցանիշի ելակետային արժեքը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքն է, թիրախային արժեքը՝ պլանավորվող արժեքն է, այսինքն այն արժեքը, որին համայնքը 2018 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում։ ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 5 բալանոց սանդղակ։ 1- շատ վատ, 2 –վատ, 3-բավարար, 4-լավ, 5-շատ լավ։

ԱՂՅՈՒՍԱԿ 1 Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

311184118	ԵԼԱԿԵՏԱՅԻՆ	ԹԻՐԱԽԱՅԻՆ	
	ԱՐԺԵՔ	ԱՐԺԵՔ	
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների	31.2	33.0	
տեսակարար կշիռն ընդհանուր	TO €.		
եկամուտների մեջ (%)։		1	
Համայնքում հաշվառված բնակիչների	1410	1413	
ընդհանուր թիվը։			
Համայնքում տարվա ընթացքում	32.0	45.5	
ներդրումների ծավալը(հազ. դրամ)։			
Աղքատության շեմից ցածր գտնվող			
ընտանիքների թվի տեսակարար կշիռը	36.0	320	
համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ(%)։	*		

ԱՂՅՈՒՍԱԿ 2.Համայնքի ոլորտային նպատակները

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿ	ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐ	ԴՅՈՒՆՔԻ	
	ցուցանիշ	ելակետայի ն արժեք	թիրախայի ն արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից	Համայնքի բնակիչների		
համայնքի բնակչությանը	բավարավածությունը		
հանրային որակյալ և	(հարցումների հիման վրա) ՏԻՄ-		
մատչելի ծառայությունների	երի աշխատակազմի ՀՈԱԿ-ի	Բավարար	Լավ
մատուցումը։	գործունեությունից, մատուցված		
	հանրային ծառայությունից	N	
Ոլորտ 2. Պաշտպանության			
կազմակերպում	2		
2018 թվականի ընթացքում	***		
ոլորտում ծրագրեր և			
միջոցառումներ չեն			
նախատեսվում,այդ			
պատմառով ոլորտային			
նպատակ չի սահմանվել	199 and the later of the second		
Ոլորտ 3 . Արտակարգ			
իրավիմակներից			
բնակչության			
պաշտպանության և	1		
քաղաքացիական	· V		
պաշտպանության			
կազմակերպում	Existing to a substitution of the last	diga a la i	
Ծաղկառու գետակի	«Ծաղկառու» գետակի ափամերձ		
հավանական հեղեղումներից	22 տների, դպրոցի,		
բնակելի տների և	մանկապարտեզի շենքերը և 50		
ցանքատարածությունների	ափամերձ տնամերձ	Բավարար	Լավ
պաշտպանության	հողամասերը պաշտպանել		1
բարելավում	հեղեղումներից		
Ոլորտ 4.			
Քաղաքաշինություն և			
կոմունալ տնտեսություն			
Բարելավել	Փողոցների և նրբանցքների		

գիշերային լուսավորվածության տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	85	95
Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից	Բավարար	Լավ
Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարվածության աստիձանը(հարցումների հիման վրա)	Վատ	Բավարար
Բնակավայրի փողոցների շահագործման և պահպանման գծով բնակչության բավարարվածությունը (հարցումների հիման վրա)	Վատ	Բավարար
	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարվածության աստիձանը(հարցումների հիման վրա) Բնակավայրի փողոցների շահագործման և պահպանման գծով բնակչության բավարարվածությունը	Մեջ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարվածության աստիձանը(հարցումների հիման վրա) Բնակավայրի փողոցների շահագործման և պահպանման գծով բնակչության բավարարվածությունը Վատ

Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը	Բնակչության բավարավածության աստիձանը համայնքի դպրոցի և ՀՈԱԿ-ի մատուցված ծառայությունների որակից	Բավարար	Լավ
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Բարձրացնել համայնքային հուշարձանների սպասարկման և պահպանման որակը, կառուցել նորերը։	Համայնքային հուշարձանների սպասարկման, պահպանության և նորերի կառուցման արդյունքում բարձրացնել բնակչության բավարարվածությունը մշակութային կառույցների հանդեպ ծառայությունների որակից(հարցումների հիման	Բավարար	Լավ
0 10	վրա)		
Ոլորտ 10. Արդուսակիր թյուն			
Առողջապահություն 2018 թվականի ընթացքում			
ոլորտում ծրագրեր և			
միջոցառումներ չեն		1	
նախատեսվում, այդ			
պատմառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			1 ,
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն			
նախատեսվում, այդ պատձառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			· \

Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը	Սոցիալական ծրագրի շահառուների բավարվածությունը իրականացվող ծրագրից(հարցումների հիման վրա)	Բավարար	Լավ
Ոլորտ 13.			
Գյուղատնտեսություն ՀՀՋԾ-ով նախատեսվել են պետական միջոցներով 1.«Ոռոգման ջրանցքի և ոռոգման ցանցի կառուցում» 2.«Ոռոգման ջրամբարի կառուցում» որոնք միայն նպատակներ են և կոնկրետ ոչինչ չկա, այդ պատձառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 14.	20. 1	<u> </u>	
Անասնապահություն և			
բուսասանիտարիա		-	
2018 թվականի ընթացքում			
ոլորտում ծրագրեր և			
միջոցառումներ չեն			
նախատեսվում, այդ		,	
պատմառով ոլորտային			
նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 15. Շրջակա			
միջավայրի	- "		
պաշտպանություն			
Ապահովել համայնքի	5		
աղբահանության որակյալ և	Համայնքի բնակիչների		
մատչելի ծառայությունների	բավարարվածությունը	Чши	Բավարար
մատուցումը, շրջակա	մատուցված աղբահանության		[[]-
C1 1 1 1 1	ծառայություններից(հարցումների հիման վրա)		
Ոլորտ 16.	njiuuu (jiu)		
Զբոսաշրջիկություն			
2018 թվականի ընթացքում			
ոլորտում ծրագրեր և			
միջոցառումներ չեն			

նախատեսվում, այդ		
պատձառով ոլորտային		
նպատակ չի սահմանվել	and the same of th	
Ոլորտ 17. Տեղական		
ինքնակառավարմանը		
բնակիչների		
մասնակցությունը		
2018 թվականի ընթացքում		
ոլորտում ծրագրեր և		
միջոցառումներ չեն		
նախատեսվում, այդ		
պատմառով ոլորտային		
նպատակ չի սահմանվել		

2. Համայնքի 2018 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)։ Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ամփոփված են համապատասխան ֆինանսական միջոցներով ։

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են բյուջետային և արտաբյուջետային համապատասխան ֆինանսական միջոցներով

2/2	Onwanh whilehalm	75
4/4	Օրագրի անվանումը	Ծրագրի արժեքը/հազ. դրամ/
1	Ոլորտ 1 Ընդհանուր	T
1.	Համայնքապետարանի աշխատակազմի	· ·
	պահպանում, հանրային որակյալ	19598.0
	ծառայությունների մատուցում	
	Ոլորտ 3. Արտակարգ իրավիմակներից բն	ւակչության պաշտպանություն և
	քաղաքացիական պաշ	
1.	Ծաղկառու գետակի հունի	
	խորացում,ափերի ամրացում	1000.0
	Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ	տնտեսություն
1.	Բնակավայրի 1-ին փողոցի 6-րդ և 7-րդ	
	նրբանցքներում գիշերային	800.0
	լուսավորության	
	անցկացում,հենասյուների ներկում	
2.	Բնակավայրի ջրամատակարարման	900.0
	համակարգերի ընթացիկ նորոգում	
	Ոլորտ 6. Տրանսպորտ	
1.	Բնակավայրի փողոցների նորոգում	1400.0
	Ոլորտ 8. Կրթություն	
1.	Համայնքի մանկապարտեզի շենքի	

	ջեռուցման համակարգի անցկացում	3000.0				
	Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
1.	Երկրաշարժի զոհերի հուշարձանի	2500.0				
	կառուցում	F. Communication of the Commun				
	Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանությու	ն				
1.	Աջակցություն սոցիալապես անապահով	2660.0				
	ընտանիքներին					
	Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պաշտպան	ություն				
1.	Բնակավայրի աղբահանության	1860.0				
	կատարում	mn e				

ՀՀԶԾ-ում արտացոլված այն ծրագրերը, որոնք պահանջում են մեծ ֆինանսական միջոցներ և ապահովված չեն ֆինանսական միջոցներով, այդ ծրագրերի ֆինանսավորումը անորոշ լինելու պատձառով ըստ տարիների պլանավորում և ֆինանսավորում նախատեսված չէ։

Մտորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների։

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը ՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ ՝	Պատասխա նատու	ժամկետ	Դիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր		(2) 1			
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը։ Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցում հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ի գործունեությունից, մատուցված հանրային ծառայություննելավ, 2. Համայնքի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը հարցում Երագիր 1.Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					ը (հարցումների 1 սյություններից - ր կշիռը համայնքի
Օրագրը դ.Հասայսքապա	այարասը աշրսասյազազար պայ	ոպասուս, ուասիայիս որ	ազյալ Ծանայութ	յուսսսիլի սա	diritgilta
Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը։	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - լավ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ, համայնքի ղեկավարի տեղակալ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համայնքապետար անի լուծարում, Աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոն
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել էաշխատակազմի բնականոն	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1 համայնքապետարանի աշխատակազմի	Տեղեկատվական աղբյուրներ. Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային,	Համայնքի ղեկավար, աշխատակազմ, համայնքի	2018թ. hունվար – 2018թ. դեկտեմբեր	Աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոն, համայնքապետալ

գործունեությունը:	գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության	տարեկան հաշվետվություններ,	ղեկավարի տեղակալ		անի լուծարում
•	աստիձանը (հարցումների հիման վրա) - լավ 2.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը				
1 FL	տարվա ընթացքում-248 oր		Cha (Charanton)		
Միջոցառումներ (գործող 1. Աշխատակազմի պահ 2. Համայնքի հողի հարկ ավտոմատացված համս 3.Համայնքապետարանի կառավարում	պանություն ի և գույքահարկի գանձման սկարգերի սպասարկում	Մուտքային ցուցանի։ 1. Համայնքապետար 19598, 0 հազ.դրամ 2. Համայնքապետար 3. Համայնքի հողի հա ավտոմատացված 4. Համայնքապետար ֆինանսավորման	անի աշխատակ։ Ն անի աշխատակ։ ւրկի և գույքահայ համակարգեր՝ 1 անի վարչական	սզմի՝ պահ սզմի աշխս ոկի գանձմս շենք և գույլ	պանման ծախսեր ստողներ՝ 9 սն ջ
Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտներիհավաքա գրման մակարդակը։	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աՃ-10 %-ով 2.Հարկային պարտականությունները չկատարողների նկատմամբ համայնքի կողմից դատարան ներկայացված հայցադիմումների թիվը-2 3.Հողի հարկի բազայում առկա անՃշտությունների նվազեցում-4 %-ով 4.Գույքահարկի բազայում առկա անՃշտությունների նվազեցում -3%-ով 5.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների	տարեկան հաշվետվություններ	Աշխատակազմի առաջատար մասնագետ- հաշվապահ, առաջին կարգի մասնագետներ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոն, համայնքապետայ անի լուծարում
վձարների բազաների ձշ ծանուցում 3.Ապառքներ ունեցող հս բացատրական աշխատ	ություններ) . ոուրքերի և վՃարների լող աշխատակիցների արկի, տեղական տուրքերի և շտում, հարկատուների սրկատուների հետ անքների իրականացում, ւ չկատարողների նկատմամբ	Մուտքային ցուցանի 1. Տեղական հարկել զբաղվող աշխատա 2. Հողիհարկի, գույք բազաներ` առկա է 3.Համայնքի բյուջեի ապառքներ` 3000,0 հ	ոի, տուրքերի և վ կիցներ՝ 2 ահարկի, տեղակ սեփական եկամ	ձարների հ լան տուրքե	ավաքագրմամբ որի և վՃարների

Ոլորտային նպատակ.

«Ծաղկառու» գետակի հավանական հեղեղումներից բնակելի տների և ցանքատարածությունների պաշտպանության բարելավում Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. «Ծաղկառու» գետակի ափամերձ 22 բնակելի տների, դպրոցի, մանկապարտեզի, ափամերձ , տնամերձ հողամասերի պաշտպանումը տարաբնույթ վարարումներից , հեղեղներից և սելավներից-լավ

Ծրագիր 1. «Ծաղկառու» գետակի հունի խորացում, ափերի ամրացում

Միջոցառումներ (գործողություններ) .

- 1.«Ծաղկառու» գետակի հունի խորացման և ափերի ամրացման նախագծա-նախահաշվային
- փաստաթղթերի պատվիրում և նախապատրաստում 2. Ծրագրված աշխատանքների կատարաման համար կազմակերպել և անցկացնել կազմակերպության ընտրության մրցույթ
- 3.Կնքել պայմանագիր հաղթող կազմակերպության հետ և իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքները։
- 4. Վերահսկել ծրագրված աշխատանքների կատարման ընթացքը, կազմել ակտերը, քննարկել և հաստատել։

Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)

- Համայնքի բյուջեից ծրագրին հատկացվող միջոցները 990.0 հազ դրամ։
- 2. Ծրագրի հարցերով զբաղվող աշխատակից՝ 1

Ծրագրի նպատակ. «Ծաղկառու» գետակի ափամերձ տարածքի բնակչությանը պաշտպանել ինարավոր հեղեղներից և վնասներից

Ծրագրի ազդեցության
(վերջնական արդյունքի)
ցուցանիշ .
«Ծաղկառու» գետակի
ափամերձ 22 տուն,
դպրոցը,մանկապարտեզը և
գետակի երկու վտակներով
պարփակված 57 տնամերձ
hողակտոր պաշտպանել
գետակի հեղեղումների
վտանգից

Ծրագրի գնահատման համակարգ . Ծրագրի վերջնական մոնիթորինգ Համայնքի 2018թ. Հզոր ղեկավարի Ապրիլ- տեխն տեղակալ, մայիս բացս ուն

տեխնիկայի բացակայությ ուն

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Ոլորտային նպատակ.

Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը։ Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.

- 1.Համայնքի փողոցների և նրբանցքների գիշերային լուսավորվածության աստիձանն ընդհանուրի մեջ հասցնել - 95 %
- 2.Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) լավ 3.Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մառուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիձանը (հարցումների հիման վրա) բավարար

Ծրագիր 1. Գյուղի 1-ին փողոցի 6-րդ և 7-րդ նրբանցքներում գիշերային լուսավորության անցկացում, հենասյուների ներկում

Ծրագրի նպատակ. Գյուղի փողոցները ապահովել անհրաժեշտ գիշերային լուսավորությամբ,բնակ չության համար գիշերային երթևեկը դարձնել հաձելի և հարմար	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ . Գյուղի փողոցները դարձնել լուսավոր բնակչության և տրանսպորտի տեղաշարժվելու համար	Ծրագրի գնահատման համակարգ . ՄԳ կիսամյակային, հաշվետվություն	2018թ. hnւնիս — hnւլիս	Համապատա սխան ֆինանսական ռեսուրսների առակայությու նը
Միջանկյալ արդյունք 1. Գյուղի փողոցները գիշերըը դարձնել լուսավոր և հարմար տեղաշարժի համար	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1.Փողոցում տեղադրված լուսատուների և հենասյուների քանակը-8 2.Ներկված հենսյուների	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ	2018թ. hnւնիս – hnւլիս	Համապատա սխան մարդկային, նյութական և ֆինանսական

•	թիվը` 15 3. Բնակչության բավարավածությունը համայնքում գիշերային լուսավորությունից-լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետ` 2 ամիս	կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, համայնքի բնակիչներ			ռեսուրսներիը առկա են
աշխատանքների նախա փաստաթղթերի պատվիր 2 ,Առաջին փողոցի արտ	տաքին լուսավորության ան,հենսյուների ներկման գծա-նախահաշվային ոում։ աքին լուսավորության ան,հենսյուների ներկման նացում և վերահսկում սարման ավարտական	Մուտքային ցուցանիշ 1. Համայնքի բյուջեով դրամ 2. Ծրագրի իրականա աշխատակազմի աշխ 3. Նախագծա-նախահ ֆինանսավորման աղբ	նախատեսված ձ ցման հարցերով Հ ատակիցներ՝ 2 աշվային փաստւ	ախսեր՝ 80 վբաղվող սթղթեր՝ 1	
Ծրագիր 2. Բնակավայրի	ջրամատակարարման համակալ	ոգերի ընթացիկ նորոգու	វ		
Ծրագրի նպատակ.Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման որակը և հասանելիությունը գյուղի բոլոր բնակիչներին	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Բնակիչների կարծիքը ջրամատակարարման վերաբերյալ-բավարար	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ, 1-ին կարգի մասնագետ, իրականացումը՝ կապալառուակա ն կազմակերպությա	2018թ. Փետրվար- նոյեմբեր	Համապատա սխան ֆինանսական ռեսուրսների անբավարար ություն
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել խմելուջրիջրամատակա րարման որակը բնակավայրի «Թունելի մայլա» թաղամասում	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Վերանորոգված ջրագծերի երկարությունը -1000մ 2. Զրագծի վթարների կանխում, անխափան ջրամատակարարում 3. Ծրագրի իրականացման ժամկետը – 10 ամիս	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ	Համայնքի ղեկավարի	2018թ. Փետրվար- նոյեմբեր	
Միջոցառումներ (գործող։ 1.Խմելու ջրագծի նորոգմ նախագծա-նախահաշվա 2. Զրագծի նորոգման իրս 3. Վերանորոգման աշխա ավարտական ակտի կազ հաստատում	ան աշխատանքների լին փաստաթղթերի կազմում սկանացում և վերահսկում տանքների կատարման	Մուտքային ցուցանիշն 1.Համայնքի բյուջեով 1000.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականայ աշխատակազմի աշխ 3. ֆինանսավորման ա	նախատեսված վե ցման հարցերով գ ատակիցներ՝ 2	րանորոգմ բաղվող	
Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ոլորտային նպատակ . Բարձրացնել բնակավայր պահպանման և երթևեկու	ի փողոցների շահագործման, թյան որակը	Ոլորտի ազդեցության 1.Բնակավայրի փողո պահպանման որակիչ աստիձանը (հարցում	ցների սպասարկվ 3 բնակչության բա	նան,շահազ ւվարաված	ործման և ության

Ծրագրի նպատակ. 1. Բնակավայրի 1-ին և երկրորդ փողոցները դարձնել անցանելի ու հարմարավետ մարդկանց և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ունենալ բարեկարգ փողոցներ, հարմար հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին- 100%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքիղեկա վարիտեղակալ, 1-ին կարգի մասնագետ, իրականացումը ` կապալառու կազմակերպությ ան միջոցով	2018թ. Ապրիլ- հունիս	Համապատ ասխան ֆինանսակ ան միջոցների անբավարա րություն
Միջանկյալ արդյունքներ. Համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ մարդկանց և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1,Բարեկարգված փողոցների երկարությունը` 2500 մ 2, բնակիչների կարծիքը բարեկարգված փողոցների վերաբերյալ- բավարար 3,Ծրագրի իրականացման ժամկետը -3 ամիս	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, հաշվետվություն, բնակիչներ	Համայնքիղեկա վարի տեղակալ, 1-ին կարգի մասնագետ	2018թ. Ապրիլ- հունիս	Համապատ ասխան ֆինանսակ ան միջոցների անբավարա րություն
աշխատանքների նախավ փաստաթղթեր 2.Կազմակերպել մրցույթ 3.Կնքել պայմանագիր մր կազմակերպության հետ,	ոի փողոցների բարեկարգման գծա-նախահաշվային ոցույթում հաղթող կատարել աշխատանքները սստատել աշխտանքների	Մուտքային ցուցանիշն 1. Ծրագրի իրականա աշխատակազմի աշխ 2. Նախագծա-նախահ 3.Համայնքի բյուջեով դրամ ֆինանսավորմանաղբ	ւցման հարցերով ատակիցներ՝ 2 ոաշվային փաստւ նախատեսված ծ	զբաղվող սթղթեր՝ 1 ախսեր՝ 140	

Ոլորտային նպատակ. Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը։		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունի մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիձանը (հարցումների հիման վրա - լավ				
Ծրագիր 1. Համայնքի մա Ծրագրի նպատակ. Բարելավել համայնքի ՆՈԻՀ ՀՈԱԿ-ի կողմից ծառայությունների մատուցման պայմանները	սնկապարտեզի շենքի ջեռուցման (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել համայնքի բնակչության նախադպրոցական կրթության ծառայությունների որակը -լավ	ն համակարգի անցկաց Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, հաշվետվություննե ր	շյում Համայնքի ղեկավար, համայնքի ՆՈͰՀ ՀՈԱԿ-ի տնօրեն,	2018թ. Փետրվար- մարտ	Ծրագրի կատարման ռիսկեր չկա	

Միջանկյալ արդյունք 1 Բարելավել է համայնքի ՆՈԻՀ ՀՈԱԿ-ի կողմից ծառայությունների մատուցման պայմանները	. Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. ՆՈԻՀ ՀՈԱԿ հաձախող երեխաների թիվը՝ 38 2. ՆՈԻՀ ՀՈԱԿ հաձախող երեխաների աձը -12% 3.Մեկ երեխայի հաշվով ՆՈԻՀ ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերը-24.8 4. Ծնողների կարծիքը մատուցված ծառայությունների վերաբերյալ-լավ 9.Ծրագրի իրականացման ժամկետը 2 ամիս	Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար, աշխատակազմ, ՄԳ-կիսամյակային հաշվետվություն	Համայնքի ղեկավար, համայնքիՆՈԻՀ ՀՈԱԿ-ի տնօրեն, Աշխատակազմ , տարեկան հաշվետվությու ններ,բնակիչնե ր, ծնողներ	2018թ. Փետրվար- մարտ	Ծրագրի կատարման ռիսկեր չկան
անցկացման նախա փաստաթղթերի պա 2. Զեոռւցում անցկաց մրցույթով ընտրությ 3. Զեռուցման համակւ 4. Աշխատանքների կւ	ԱԿ-ի ջեռուցման համակարգերի գծա-նախահաշվային լատվիրում։ նող կազմակերպության ան պայմանագրի կնքում սրգերի անցկացում ստարման հանձնման- ական ակտի կազմում	Մուտքային ցուցանի 1. ՆՈԻՀ ՀՈԱԿ-ի աշ 2. Նախագծա-նախս 3. Համայնքի բյուջեր ջեռուցման ծախս ֆինանսավորման ար	խատակազմերի սհաշվային փաս ով նախատեսվա եր` 3000.0 հազ. դ	աշխատակ տաթղթեր` Ծ ՆՈͰՀ ՀՈԼ ւրամ,	իցներ՝ 6 1 ԼԿ-ի
Ոլորտ 9.Մշակույթ և երիս	ոասարդության հետ տարվող աշ				
Ոլորտային նպատակ. Բարձրացնել համայնքս սպասարկման և պահպ նորերը	սյին հուշարձանների անման որակը,կառուցել	Ոլորտի ազդեցության Հուշարձանների սպա կառուցման արդյունք բավարարվածություն ծառայությունների որւ	սարկամ, պահպւ ում բարձրացնել ը մշակութային o	սնման և նո բնակչությա ջախների ն	րերի ւն կատմամբ
Ծրագիր 1. Երկրաշարժի	զոհերի հուշարձանի կառուցում				
Ծրագրի նպատակ. Հավերժացնել երկրաշարժի զոհերի հիշատակը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Հիմնել կառույց, որտեղ համայնքի բնակչությունը իր հարգանքի տուրքը կմատուցի երկրաշարժի զոհերի իշատակին	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ տարեկան հաշվետվություն Համայնքի ղեկավար, բնակիչներ	Համայնքի ղեկավար, 1-ին կարգի մասնագետ	2018թ. Հուլիս, սեպտեմբե ր	ֆինանսական միջոցների անբավարար ւթյուն
Միջանկյալ արդյունք 1. 1,Համայնքային հուշարձանների համալրում 2,Հոգևոր արժեքների նկատմամբ բնակչության պահանջմունքի	Միջանկյալ արդյունք 1. Ելքային ցուցանիշներ (Համայնքային (քանակ, որակ, ժամկետ) 1.Հուշարձաններ այցելուների թիվը՝ 1450 մարդ 2.Հոգևոր արժեքների նկատմամբ Հության երախտագիտության ավելացում (հարցումների		Համայնքի ղեկավար, 1-ին կարգի մասնագետ	2018թ. Հուլիս- սեպտեմբե ր	ֆինանսակա ն միջոցների անբավարավ ածություն
Միջոցառումներ (գործողո 1,Պատվիրել երկրաշարժ նախագծա-նախահաշվայ 2,Մրցույթով ընտրել շինա 3,Կառուցել հուշարձանը 4,Կազմել կառույցի ավար քննարկել, հաստատել	ի զոհերի հուշարձանի յին փաստաթղթեր	Մուտքային ցուցանիշն 1. Համայնքապետրան 2. Նախագծա-նախահ 3, Հուշարձանի կառում ֆինանսավորման աղբ	ի աշխատակազ աշվային փաստւ ցման ծախսեր- 2	մ-2 սթղթեր-1 500.0 hազ.	

Ոլորտ 12.Ungիալակա	ն պաշտպանություն						
Ոլորտային նպատակ.		Ոլորտի ազդեցությա			ւցանիշ.		
Ապահովելսոցիալապե	ւս անապահով ընտանիքներին	1.Սոցիալական ծրա					
տրամադրվող unghալ		2. Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը					
իասցեականությունը և		իրականացվող ծրա	գրից - լավ,				
	ուն սոցիալապես անապահով ընւ		C S C - L	10040	- C - S		
Ծրագրի նպատակ. Բարելավել	Ծրագրի ազդեցության	Ծրագրի	Համայնքի ղեկավար,	2018թ. hունվար –	Համապատաս ան		
անապահով	՛ (վերջնական արդյունքի) ցուցանիշ.	գնահատման համակարգ.	աշխատակազմ	դեկտեմբել			
ընտանիքների հետ	բուցանիշ. Բարելավվել սոցիալապես	ՄԳ կիսամյակային,	21	Trade tracked	ռեսուրսների		
տարվող	անապահով ընտանիքներին				անբավարարո		
աշխատանքների	տրամադրվող սոցիալական	հաշվետվություններ			ուն		
որակը և	աջակցության						
հասցեականությունը	իասցեականությունը և			16			
	ծառայության			-			
	մատչելիությունը(հարցումնե	η	-				
	ի հիման վրա) - լավ						
Միջանկյալ արդյունք 1		Տեղեկատվական	Համայնքի	2018р.	Համապատաս		
Բարելավվել է (քանակ, որակ, ժամկետ)		աղբյուրներ	ղեկավար,	իունվար –	September 1		
սոցիալապես 1.Սոցիալական անապահով աջակցություն ստացած ընտանիքներին ընտանիքների,հաշմանդամն տրամադրվող երի, ուսանողների թիվը -64 սոցիալական 2.Բնակչության կարծիքը		Համայնքի ղեկավար	_{1,} տեղակալ , աշխատակազմ	դեկտեմբեր	ֆինանսական ռեսուրսները		
		վարչական	azjaaanaqaqa		առկա են		
		ղեկավարներ, աշխատակազմ ՄԳ		1			
		կիսամյակային,	Vis. 1		-		
աջակցության սոցիալական աջակցության		տարեկան					
հասցեականությունը	ծառայության մատուցման	հաշվետվություններ	,				
	իասցեականության մասին -	շահառուներ					
	լավ,						
	6. Ծրագրի իրականացման						
151	ժամկետը - 1 տարի	10 10 01					
Միջոցառումներ (գործո		Մուտքային ցուցանի					
ընտանիքների հայտնւ	ցության կարիք ունեցող	1. Համայնքի բյուջեո			սս աջակցությա		
		տրամադրման ծախսեր` 2660.0 հազ. դրամ, ֆինանսավորման աղբյուրը` համայնքի բյուջեի միջոցներ					
.5. Unioniiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiiii	anteintti tiinttiittint nniinttiitenn						
	ցություն ստանալու դիմումների թյան տոամառոում			ո բյուջեի մի	ջոցներ		
քննարկում և աջակցու	թյան տրամադրում			ո բյուջեի մի	ջոցներ		
քննարկում և աջակցու լորտ 15.Շրջակա միջավ	թյան տրամադրում	ֆինանսավորման ա	ղբյուրը՝ համայնքի				
քննարկում և աջակցու լորտ 15.Շրջակա միջաւ լորտային նպատակ.	թյան տրամադրում լ այրի պահպանություն	ֆինանսավորման ա Ոլորտի ազդեցության (ղբյուրը՝ համայնք (վերջնական արդյ	ունքի) ցուցւ	անիշ.		
քննարկում և աջակցու լորտ 15.Շրջակա միջաւ լորտային նպատակ. պահովել բնակավայրո	թյան տրամադրում վ <mark>այրի պահպանություն</mark> ւմ բնակչության	ֆինանսավորման ա Ոլորտի ազդեցության (1. Համայնքի բնակիչնե	ղբյուրը՝ համայնք (վերջնական արդյ երի բավարարվա	ունքի) ցուց ծությունը մս	անիշ. ստուցված		
քննարկում և աջակցու լորտ 15.Շրջակա միջաւ լորտային նպատակ. պահովել բնակավայրո աղբահանության որակ	թյան տրամադրում Լայրի պահպանություն ւմ բնակչության յալ և մատչելի	ֆինանսավորման աւ Ոլորտի ազդեցության (1. Համայնքի բնակիչնե աղբահանության ծառս	ղբյուրը՝ համայնք (վերջնական արդյ երի բավարարվա	ունքի) ցուց ծությունը մս	անիշ. ստուցված		
քննարկում և աջակցու որտ 15.Շրջակա միջավ որտային նպատակ. պահովել բնակավայրու աղբահանության որակ ծառայությունների մատ	թյան տրամադրում վ <mark>այրի պահպանություն</mark> ւմ բնակչության	ֆինանսավորման ա Ոլորտի ազդեցության (1. Համայնքի բնակիչնե	ղբյուրը՝ համայնք (վերջնական արդյ երի բավարարվա	ունքի) ցուց ծությունը մս	անիշ. ստուցված		
քննարկում և աջակցու որտ 15.Շրջակա միջավ որտային նպատակ. պահովել բնակավայրու աղբահանության որակ ծառայությունների մատ	թյան տրամադրում Լայրի պահպանություն ւմ բնակչության յալ և մատչելի	ֆինանսավորման աւ Ոլորտի ազդեցության (1. Համայնքի բնակիչնե աղբահանության ծառս	ղբյուրը՝ համայնք (վերջնական արդյ երի բավարարվա	ունքի) ցուց ծությունը մս	անիշ. ստուցված		
քննարկում և աջակցու լորտ 15.Շրջակա միջաւ լորտային նպատակ. պահովել բնակավայրո աղբահանության որակ ծառայությունների մատ մաքրությունը։	թյան տրամադրում Լայրի պահպանություն ւմ բնակչության յալ և մատչելի	ֆինանսավորման աւ Ոլորտի ազդեցության (1. Համայնքի բնակիչնե աղբահանության ծառս բավարար	ղբյուրը ՝ համայնքի (վերջնական արդ յ երի բավարարվա սյությունից (հարց	ունքի) ցուց ծությունը մս	անիշ. ստուցված		
քննարկում և աջակցու որտ 15.Շրջակա միջավ որտային նպատակ. պահովել բնակավայրո աղբահանության որակ ծառայությունների մատ մաքրությունը։	թյան տրամադրում վայրի պահպանություն ւմ բնակչության յալ և մատչելի ոուցումը և շրջակա միջավայրի	ֆինանսավորման այ Ոլորտի ազդեցության (1. Համայնքի բնակիչնե աղբահանության ծառս բավարար ւթյունների մատուցում Ծրագրի	ղբյուրը՝ համայնք (<mark>վերջնական արդ</mark> յ որի բավարարվա սյությունից (հարց Համայնքի	ունքի) ցուցւ ծությունը մս ումների հիմ	անիշ. ստուցված iան վրա) -		
քննարկում և աջակցու որտ 15.Շրջակա միջաւ որտային նպատակ. պահովել բնակավայրո աղբահանության որակ ծառայությունների մատ մաքրությունը։ րագիր 1. Բնակավայր	թյան տրամադրում վայրի պահպանություն ւմ բնակչության յալ և մատչելի յուցումը և շրջակա միջավայրի	ֆինանսավորման աւ Ոլորտի ազդեցության (1. Համայնքի բնակիչնե աղբահանության ծառա բավարար ւթյունների մատուցում Ծրագրի գնահատման	ղբյուրը՝ համայնք (վերջնական արդյ երի բավարարվա սյությունից (հարց Համայնքի ղեկավար,	ունքի) ցուցւ ծությունը մս ումների հիմ 2018թ. Լ յունվար — մ	անիշ. ստուցված ման վրա) - սուսա են մարդկային և		
